ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.01.2023Թ. ԿՆՔՎԱԾ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/18-11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «07» 06 2023թ.

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Վարդումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 19.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/18-11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.2 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.3 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 19.01.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100

Մ.ԱԴԱՄՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղամաս 1-ին փ.թիվ 2/1
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2052122121581001
ՀՎՀՀ 07616781

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ